ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյանի և
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանի
հաշվետվությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի
50-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

ԱՄՆ/ Նյու Յորք/05.03-08.03.2019թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 50-րդ նստաշրջան

- **Քննարկված թեմաները**

Հանձնաժողովը համարվում է գերագույն մարմին միջազգային վիճակագրական համակարգում, որը քննության է առնում և հաստատում միջազգային վիճակագրական չափորոշիչները:
Տնտեսական և սոցիալական խորհուրդը չափազանց կարևորում է հանձնաժողովի համակարգման գործառույթը և դերը՝ հասնելու միջազգային վիճակագրության հավաքագրման, մշակման և տարածման ինտեգրացված համակարգի:
Վիճակագրական հանձնաժողովի գործառույթների շարքին են դասվում.
- օժանդակումն ազգային վիճակագրությունների զարգացմանը և դրանց համադրելիության կատարելագործմանը,
- մասնագիտացված գործակալությունների վիճակագրական աշխատանքների համակարգումը,
- քարտուղարության կենտրոնական վիճակագրական ծառայությունների զարգացումը,
- վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մեկնաբանման և տարածման հետ կապված ընդհանուր հարցերի վերաբերյալ խորհրդատվության ցուցաբերումը ՄԱԿ-ի մարմիններին,
- օժանդակումը վիճակագրության և վիճակագրական մեթոդների կատարելագործմանը:
1999թ. հուլիսին Տնտեսական և սոցիալական խորհուրդը որոշում է կայացրել, որ սկսած 2000թ. հանձնաժողովը պետք է հանդիպի տարին մեկ անգամ՝ 4 օրով:
Հանձնաժողովի հանդիպման արդյունքներով կազմված հաշվետվությունը ներկայացվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի նստաշրջանի քննարկմանը:
Հանձնաժողովի 50-րդ նստաշրջանում քննարկվեցին հետևյալ հիմնահարցերը.

1.Պաշտոնատարների ընտրություն
2. Օրակարգի հաստատում և այլ կազմակերպական հարցեր
3. Քննարկման և որոշումների կայացման համար հարցեր.
- տվյալներ և ցուցանիշներ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար,
- պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ,
- բաց տվյալներ,
- ազգային որակի ապահովման շրջանակներ,
- տարածաշրջանային վիճակագրական զարգացում,
- ազգային հաշիվներ,
- ֆինանսների վիճակագրություն,
- միջազգային առևտրի և բիզնեսի վիճակագրություն,
- արդյունաբերության վիճակագրություն,
- գների վիճակագրություն,
- միջազգային համադրումների ծրագիր,
- բնապահպանական-տնտեսական հաշվառում,
- աղետներին վերաբերող վիճակագրություն,
- միջազգային միգրացիայի վիճակագրություն,
- մարդկային բնակավայրերի վիճակագրություն,
- հանցագործությունների վիճակագրություն,
- թմրանյութերի և թմրանյութերի օգտագործման վիճակագրություն,
- կրթության վիճակագրություն,
- վիճակագրական հանձնաժողովի աշխատանքային մեթոդները
4. Տեղեկատվության համար հարցեր.
- ժողովրդագրական վիճակագրություն,
- առողջության վիճակագրություն,
- տնային տնտեսությունների հետազոտություններ,
- գների ինդեքսներ,
- մեծ տվյալներ պաշտոնական վիճակագրության համար,
- վիճակագրական ներուժի զարգացում,
- տվյալների և մեթատվյալների փոխանակման ընդհանուր բաց ստանդարտներ,
- վիճակագրական ծրագրերի համակարգում,
- վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում,
- Գլխավոր Վեհաժողովի ու Տնտեսական և Սոցիալական Խորհրդի քաղաքականության որոշումներին հետամուտ լինելը
5. Ծրագրի հարցեր (վիճակագրության բաժին)
6. Հանձնաժողովի 51-րդ նստաշրջանի նախնական օրակարգը և անցկացման ժամկետները
7. Հանձնաժողովի զեկույցն իր 50-րդ նստաշրջանի վերաբերյալ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանը ելույթով հանդես եկավ հետևյալ հարցերի շուրջ՝ ազգային որակի ապահովման շրջանակներ, մասնավորապես, կարևորելով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձը և որակի հարցերը տվյալների տարածման փուլում, միջազգային առևտրի և բիզնեսի վիճակագրություն, մասնավորապես, նշելով Վիսբադենի խմբի

աշխատանքի կարևորությունը բիզնես ռեգիստրների բնագավառում, աղետներին վերաբերող վիճակագրություն, մասնավորապես, կարևորելով աղետներին վերաբերող վիճակագրությունը և նշելով, որ դա չափազանց բարդ խնդիր է, սակայն առաջին հայացքից թվում է, թե պարզ, նշվեց անհրաժեշտությունը անցկացնելու դասընթացներ նշյալ ոլորտում, բարձր գնահատվեց ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և տարածքային վիճակագրական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքը, հատկապես ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանը շնորհակալություն հայտնեց ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի տնօրեն Ստեֆան Շվեյնֆեստին հանձնաժողովի 50-րդ նստաշրջանը և հարակից միջոցառումները բարձր մակարդակով կազմակերպելու և համաշխարհային վիճակագրական համակարգի հորիզոնական ու ուղղահայաց համակարգումն ապահովելու համար՝ անդրադառնալով այն հարցին թե արդյո՞ք ազգային վիճակագրական գրասենյակները կգոյատևեն մինչև 2030 թ. և շեշտելով, որ այո, քանզի գոյություն ունեն ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները:

Նստաշրջանին նախատեսված էին բազմաթիվ հարակից միջոցառումներ, որոնց հրավիրվում են մասնակցելու տարբեր ոլորտներում հաջողված փորձ ունեցող երկրների նստաշրջանին մասնակցող պատվիրակությունների անդամները:

Մարտի 5-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանը մասնակցել և որպես բանախոս հանդես է եկել Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի նախագահության շրջանակներում ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության կողմից կազմակերպված Թվային օրակարգի իրականացման գործում վիճակագրական գործակալությունների դերին նվիրված հարակից միջոցառմանը:

Նույն օրը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյանը մասնակցել և «Վիճակագրության Ճանապարհային քարտեզի իրականացումը ԿԶՆ-ի համար՝ Հայաստանի փորձը» խորագրով շնորհանդես է ներկայացրել ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ճանապարհային քարտեզ Կայուն զարգացման նպատակների համար» խորագրով հարակից միջոցառմանը՝ ներկայացնելու Հայաստանի հաջողված փորձը և ձեռքբերումներն ազգային համակարգման մեխանիզմների, սահմանումներին համապատասխանության ու տվյալների առկայության ինքնագնահատման, ԿԶՆ-ի համար վիճակագրության տարածման և հաղորդակցման, ԿԶՆ-ի վիճակագրության Ազգային հաշվետվողականության հարթակի մշակման, ստեղծման, գործարկման և կատարելագործման, վիճակագրական ներուժի ամրապնդման գործողությունների վերաբերյալ:

2019թ. մարտի 6-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների և ներկայացուցիչների հանդիպումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման հիմնական ուղղությունների և մակրոտնտեսության գծով Կոլեգիայի անդամ-նախարար՝ տիկին Տ. Վալովայայի հետ, որի ժամանակ քննարկվեցին հետևյալ հարցերը կապված վիճակագրության ոլորտում համագործակցության հետագա զարգացման հետ.

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների հետ աշխատանքային հանդիպումների հիման վրա հրահանգների իրականացման ընթացքի վերաբերյալ
2. 2021-2025 թթ. Եվրասիական տնտեսական միության վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման Ծրագրի հիմնական խնդիրների ու առաջնահերթությունների վերաբերյալ
3. Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձևավորման մեթոդաբանության կիրառման մասին
4. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային նոմենկլատուրայի այլ միջազգային դասակարգումների հետ ներդաշնակեցման մասին
5. Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձևավորման վերաբերյալ՝ ըստ 2020թ. փուլի մարդահամարների արդյունքների 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի նպատակների ձեռքբերման համատեքստում:

Հայաստանը ելույթով հանդես եկավ արտաքին առևտրի վիճակագրության և մարդահամարի շուրջ և գրավոր ներկայացրեց իր մեկնաբանությունները քննարկվող հարցերի վերաբերյալ:

- **Արդյունքները**

Մասնակցությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 50-րդ նստաշրջանին հնարավորություն ընձեռեց քննարկելու միջազգային զարգացման նպատակները՝ տվյալները և ցուցանիշները Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար, Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի հաշվետվությունը՝ կայուն զարգացման գլոբալ ցուցանիշների շրջանակի իրականացման շարունակական աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես. ա) ըստ մակարդակների դասակարգման արդիականացումները և 3-րդ մակարդակի ցուցանիշների մեթոդաբանական զարգացումը, բ) տվյալների հոսքերի վերաբերյալ ուղեցույցների իրականացման չափորոշիչները և ԿԶՆ-ի համար գլոբալ տվյալների հաշվետվողականությունը ու լավագույն փորձը, գ) հնարավոր ցուցանիշներն օգտագործվող անմիջական մշտադիտարկման համար, դ) տվյալների դեզագրեգացման, փոխկապակցվածության, Վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակման ստանդարտի (SDMX), աշխարհատարածական տեղեկատվության գծով իրականացվող աշխատանքները, ե) ցուցանիշների տարեկան ճշգրտումները և պլանավորումը 2020թ. համապարփակ վերանայման համար:

Մասնակցությունը նստաշրջանին հնարավորություն ընձեռեց քննարկելու ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների իրականացման վերաբերյալ երկրների կողմից ինքնագնահատման վերաբերյալ գլոբալ հետազոտության արդյունքները, որին մասնակցել է նաև ՀՀ ՎԿ-ն, ներառյալ որոշ երկրների կողմից չկատարման հետ կապված հարցերի վերլուծությունը, հիմնարար սկզբունքների կիրառումը ոչ ավանդական տվյալների աղբյուրներից օգտվելու դեպքում, ինչպես նաև ծանոթանալու վիճակագրական տարբեր ոլորտների վերջին զարգացումներին, մշակված արդի ձեռնարկներին և լավագույն փորձին, ամրապնդելու վիճակագրական համակարգի կարողությունները և խթանելու զարգացումները, կատարելագործելու վիճակագրության տարբեր ոլորտները միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից մեթոդաբանական գործիքակազմին և ստանդարտներին համահունչ, ինչպես նաև քննարկելու համակարգի զարգացման հեռանկարները և հետագա համագործակցության հնարավորությունները:
Մասնակցությունը նստաշրջանին հնարավորություն ընձեռեց նաև Համաշխարհային Բանկի (ըստ նախնական պայմանավորվածության), ինչպես նաև այլ դոնոր կազմակերպությունների հետ քննարկելու ՀՀ 2020թ. մարդահամարին դրամաշնորհային օժանդակության տրամադրման և բնակչության վարչական ռեգիստրի հիման վրա մարդահամարի անցկացման Սկանդինավյան երկրների փորձի փոխանակման (տեխնիկական օժանդակության) հնարավորությունները:

- **Նշումներ**

Նստաշրջանի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի ղեկավար՝ տիկին Լ. Բրատանովայի, Եվրամիության Վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) գլխավոր տնօրեն՝ տիկին Մարինա Կոտցևայի, Ֆինլանդիայի վիճակագրության գլխավոր տնօրեն՝ տիկին Մարջո Բրուունի, Դանիայի ազգային վիճակագրական ծառայության Գլխավոր տնօրեն՝ պարոն Յ. Էլմեսկովի հետ, մասնավորապես ՀՀ 2020թ. մարդահամարին օժանդակության տրամադրման և բնակչության վարչական ռեգիստրի հիման վրա մարդահամարի անցկացման գծով համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ՝ պարոն Մ. Ստեյների հետ, մասնավորապես Գյուղատնտեսական ինտեգրացված հետազոտության (AGRIS) ծրագրի իրականացման վերաբերյալ, ԱՄՆ-ի Հաշվառումների Բյուրոյի ներկայացուցիչ՝ պարոն Օ. Ֆիշերի հետ, մասնավորապես մարդահամարի բնագավառում, Համաշխարհային Բանկի փորձագետներ՝ պարոն Մ. Լապշինի և տիկին Բ. Էդդեն Խալթքխուուի հետ գյուղատնտեսության վիճակագրության բնագավառի համար պլանշետների ձեռքբերման վերաբերյալ, Բուլղարիայի Հանրապետության Ազգային վիճակագրական ինստիտուտի նախագահ՝ պարոն Ս. Ցվետարսկու հետ հետագա համագործակցության շարունակության համար նոր միջոցառումների վերաբերյալ, որոնցում ներգրավված են երիտասարդ մասնագետները, ԱՄՆ-ի վիճակագրության փորձագետ՝ տիկին Կալի Կոնգի հետ

ԿԶՆ-ի վիճակագրության Ազգային հաշվետվողականության հարթակի գծով հետագա համագործակցության վերաբերյալ:
Հանձնաժողովի 50-րդ նստաշրջանին մասնակցում էին ներկայացուցիչներ հանձնաժողովի 24 անդամ երկրներից, ինչպես նաև դիտորդներ ՄԱԿ-ի այլ անդամ երկրներից և ոչ անդամ երկրներից, ներկայացուցիչներ ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններից և դիտորդներ միջկառավարական, հասարակական և այլ կազմակերպություններից: Հանձնաժողովին քննարկված և բոլոր լեզուներով թարգմանված փաստաթղթերը տեղադրվել են կայքում (https://unstats.un.org/unsd/statcom/50th-session/documents/):
Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյան